ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 411 Ա
<< 18 >> ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024Թ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ № ԴԽ/15. 2/39333-2024 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր կարգի տնտեսություններում 2025 թվականի հունվարի մեկի դրությամբ առկա գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները 2025 թվականի հունվարի մեկից մինչև 17-ը ընկած ժամանակահատվածում կատարելու և վիճակագրական տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել տվյալ համայնքի ղեկավարին և անասնաբույժին:
3. Անասնագլխաքանակի հաշվառումը և արդյունքների ամփոփումը կատարել սահմանված ժամկետներում:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. ԵՂԵԳՆԱՁՈՐ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2024 թվականի <<18>> դեկտեմբերի
N 1111-Ա որոշման

2025թ հունվարի 1-ից մինչև 17-ը ընկած ժամանակահատվածում մարզի գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր տնտեսություններում հունվարի 1-ի դրությամբ անցկացվող գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետներում կատարելու համար և վիճակագրական տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով ստեղծված մարզային հանձնաժողովի կազմը.

1. Մարգարյան Գեղամ - ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/
2. Ղազարյան Սևակ - ՀՀ Վիճակագրական կոմիտեի Վայոց ձորի մարզային վարչության պետ /համաձայնությամբ/
3. Հովհաննիսյան Վարդան - ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետ
4. Խաչատրյան Գոհար - ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ
5. Թունյան Աշոտ - ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության ավագ մասնագետ
6. Ավագյան Համլետ - ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Վայոց ձորի մարզային կենտրոնի պետ
7. Հարությունյան Անի - <<Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի Եղեգնաձորի տարածաշրջանի համաճարակաբան /համաձայնությամբ/
8. Իխտիարյան Հովհաննես - <<Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի Վայոց ձորի մարզի Վայքի տարածաշրջանի համաճարակաբան /համաձայնությամբ/